ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Հայաստանի բանկ) եւ Բելառուսի Հանրապետության ազգային բանկը (այսուհետ՝ Բելառուսի բանկ), այսուհետ՝ Կողմեր,

ցուցաբերելով փոխադարձ հետաքրքրություն վճարահաշվարկային հարաբերությունների կատարելագործման եւ բանկային գործունեության կարգավորման հարցերով փոխշահավետ համագործակցության զարգացմանը,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

1. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների հանդիսացող անձանց (այսուհետ՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներ) միջեւ հաշվարկները եւ վճարումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության ազգային արժույթներով, ԱՊՀ մասնակից հանդիսացող այլ պետությունների արժույթներով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան այլ արժույթներով:

2. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների միջեւ գործարքներ կնքելիս այդ գործարքների վճարման արժույթը սահմանվում է՝ հաշվի առնելով 1-ին կետի պահանջները:

3. Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրականացվող արժույթի առքի, վաճառքի եւ փոխարկման գործառնությունները կատարվում են առանց արժույթի տեսակների սահմանափակումների՝ տվյալ գործառնությունները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության պահանջներին հետեւելու պայմանով:

4. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության ֆիզիկական անձինք կարող են իրականացնել փոխադարձ բանկային փոխանցումներ, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեության հետ, ինչպես Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության բանկերում հաշիվներ բացելով, այնպես էլ առանց հաշիվներ բացելու՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված արժույթներով, ինչպես նաեւ ցանկացած այլ արժույթով, որի ազգային արժույթի նկատմամբ պաշտոնական փոխարժեքը սահմանում է ինչպես Հայաստանի բանկը, այնպես էլ Բելառուսի բանկը՝ հաշվի առնելով փոխանցման գումարի սահմանափակումները, որոնք սահմանված են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքից իրականացվում է բանկային փոխանցում, եւ այդ օրենսդրության պահանջները պահպանելու պայմանով:

ՀՈԴՎԱԾ 2

1. 1-ին հոդվածում նշված հաշվարկները եւ վճարումները իրականացվում են Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերի թղթակցային հաշիվներով, որոնք բացվում են միմյանց մոտ կամ երրորդ երկրների բանկերում՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետը: Ընդ որում, վճարումներն իրականացվում են քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության բանկերում համապատասխանաբար բացված հաշիվներով (հաշիվներից), բացառությամբ 1-ին հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերի, երբ վճարումն իրականացվում է առանց հաշիվ բացելու:

2. 1-ին հոդվածում նշված հաշվարկներն ու վճարումները կարող են իրականացվել նաեւ այն հաշիվների միջոցով, որոնք քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցները (բացի լիազորված բանկերից) ունեն արտասահմանյան բանկերում

համապատասխան Կողմի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված հաշիվներով հաշվարկները քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներն իրականացնում են՝ ելնելով Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության պահանջներից:

3. Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված հաշվարկներն ու վճարումները կատարելու համար Կողմերը կարող են թղթակցային եւ այլ հաշիվներ բացել միմյանց մոտ, ինչպես նաեւ համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերում եւ լիազորված բանկերի անունով: Վերը նշված հաշիվներով վճարումների եւ հաշվարկների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Կողմերի միջեւ կնքվող առանձին համաձայնագրերով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության պահանջները:

4. Կողմերը պատասխանատվություն չեն կրում Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերի փոխադարձ պարտավորությունների կարգավորման հարցում:

ՀՈԴՎԱԾ 3

1. Բելառուսի Հանրապետության լիազորված բանկեր են համարվում Բելառուսի բանկից Ընդհանուր լիցենզիա ստացված բանկերը:

2. Հայաստանի Հանրապետության լիազորված բանկեր են համարվում բանկային գործունեություն իրականացնելու համար Հայաստանի բանկից լիցենզիա ստացած բանկերը:

3. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերը միմյանց մոտ կամ միակողմանի կարգով հաշիվներ են բացում իրենց միջեւ կնքված համաձայնագրերի հիման վրա, որոնցում սահմանված են վճարումների իրականացման կարգն ու պայմանները՝ ելնելով Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրության պահանջներից:

4. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերն այդ համաձայնագրերի շրջանակներում կարող են իրականացնել Կողմերի պետությունների ազգային արժույթների առք ու վաճառք, փոխադարձ վարկավորում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ գործողություններ:

5. Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերի թղթակցային հաշիվներում առկա՝ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության ազգային արժույթներով միջոցները ընթացիկ վճարումների իրականացման համար կարող են օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների օգտին՝ Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

1. Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերը Հայաստանի Հանրապետության ներքին արժութային շուկայում գործառնություններ կատարում են Հայաստանի Հանրապետության լիազորված բանկերի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

2. Հայաստանի Հանրապետության լիազորված բանկերը Բելառուսի Հանրապետության ներքին արժութային շուկայում գործառնություններ կատարում են Բելառուսի Հանրապետության լիազորված բանկերի միջոցով, եթե Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ 5

1. Հայաստանի Հանրապետության իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, ինչպես

նաեւ անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացումը եւ վարումը Բելառուսի Հանրապետության բանկերում իրականացվում են Բելառուսի Հանրապետության օրենսդրության համաձայն, Հայաստանի բանկի համապատասխան թույլտվության առկայության դեպքում, եթե նման թույլտվություն ստանալը նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Բելառուսի Հանրապետության իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացումը եւ վարումը Հայաստանի Հանրապետության բանկերում իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, Բելառուսի բանկի համապատասխան թույլտվության առկայության դեպքում, եթե նման թույլտվություն ստանալը նախատեսված է Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 6

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում Կողմերը պարտավորվում են միմյանց գրավոր տեղեկացնել Կողմերի երկրների օրենսդրությամբ սահմանված՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված հաշիվների բացման կարգի մասին: Հետագայում՝ վերը նշված կարգի փոփոխման դեպքում, Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է վերը նշված կարգը սահմանող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու պահից մեկ ամսվա ընթացքում կատարված փոփոխությունների մասին գրավոր տեղեկացնել մյուս Կողմին:

2. Կողմերը պարտավորվում են վերը նշված տեղեկությունները ներկայացնել որպես ի գիտություն Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության բանկերին:

ՀՈԴՎԱԾ 7

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից կորցրած է համարվում 1996 թվականի օգոստոսի 9-ի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Բելառուսի Հանրապետության ազգային բանկի միջեւ հաշվարկների կազմակերպման մասին համաձայնագիրը եւ 1996 թվականի սեպտեմբերի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եւ Բելառուսի Հանրապետության ազգային բանկի միջեւ հաշվարկների կազմակերպման մասին լրացուցիչ համաձայնագիրը:

2. Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները Կողմերը լուծում են բանակցությունների միջոցով:

3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել եւ լրացվել՝ Կողմերի կողմից Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող արձանագրություններ ստորագրվելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցագիրը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Համաձայնագիրը գործում է մինչեւ Կողմերի կողմից հաշվարկների կազմակերպման մասին նոր համաձայնագրի ստորագրումը կամ ուժը կորցնում է սույն Համաձայնագրի Կողմերից որեւէ մեկի կողմից մյուս Կողմին դրա դադարեցման մասին գրավոր ծանուցելուց 1 ամիս հետո:

Ստորագրված է Երեւանում 2005 թվականի օգոստոսի 20-ին եւ Մինսկում, 2005 թվականի սեպտեմբերի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ ռուսերեն: Բոլոր տեքստերն ունեն միեւնույն իրավաբանական ուժը: Վեճեր եւ տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 24-ին: